ԳՈՐԾԱՐԱՐ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՓՄՁ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
23 հուլիսի, 2021թ.

Հուլիսի 26-28-ը «Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամը (Ներդրումների աջակցման կենտրոն) և Հայ-շվեյցարական առևտրի պալատը, Հայաստանում Շվեյցարիայի դեսպանատան և Շվեյցարիայում Հայաստանի դեսպանատան հետ համատեղ, կազմակերպում են **«Նորարարության օր» ամենամյա համաժողովը,** որի նպատակն է բարձրացնել հայկական ՓՄՁ-ների տեսանելիությունը ներդրողների շրջանում և նպաստել հայկական արտադրանքի արտահանմանը:

Համաժողովի բացման արարողությունը տեղի կունենա հուլիսի 26-ին՝ ժամը 9:30, «Էլիտ պլազա» բիզնես կենտրոնի «Green Expo» սրահում: *Ներկա կլինեն և ելույթներով հանդես կգան «Էնթերփրայզ Արմենիայի» գլխավոր տնօրեն Լևոն Օհանեսյանը, Հայաստանում Շվեյցարիայի դեսպան Ստեֆանո Լազարոթոն: Ուղիղ տեսակապի միջոցով մասնակիցներին ողջույնի խոսք կհղեն Շվեյցարիայում Հայաստանի դեսպան Անդրանիկ Հովհաննիսյանը, Հայ-շվեյցարական առևտրի պալատի նախագահ Մայք Բարոնյանը և պալատի խորհրդի քարտուղար, տնօրեն Գոհար Սանֆիլիպոն:*

Համաժողովի երեք օրերի ընթացքում Հայաստանում գործող շուրջ երեք տասնյակ փոքր և միջին ընկերություններ կներկայացնեն իրենց ընդլայնման հեռանկարները: Միջոցառման ձևաչափը թույլ կտա յուրաքանչյուր ընկերության մասին պատմող կարճ հոլովակներ նկարահանել, որտեղ ընկերության ներկայացուցիչները կպատմեն իրենց բիզնես գաղափարների, դրանց իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսների, արտահանման ներուժի մասին:

Միջոցառումը նոր հնարավորություններ կստեղծի հայկական ընկերությունների համար. Հայ-շվեյցարական առևտրի պալատի նախաձեռնությամբ՝ հայ գործարարների մասին պատմող հոլովակները հետագայում կցուցադրվեն Շվեյցարիայի և աշխարհի այլ երկրների գործարար շրջանակներին՝ փորձելով աջակցել ներդրողների համար հայկական ընկերությունների տեսանելիության բարձրացմանը և «Արտադրված է Հայաստանում» ապրանքանիշի ճանաչելիության մեծացմանը:

Միջոցառմանը նյութական օժանդակություն են տրամադրում «Polixis» և «Azad Pharma» ընկերությունները:

ԶԼՄ-ներին հրավիրում ենք լուսաբանել համաժողովի բացման արարողությունը՝ հուլիսի 26-ին՝ ժամը 9:30, «Էլիտ պլազա» բիզնես կենտրոնի «Green Expo» սրահում: Միջոցառման օրակարգը կցվում է: